չարունակուիլը բաժանորդաց սիրկցու�թիւնէն կը կախուի։ Այս մեր հասարակութիւնը այսպիսի թերթեր ունենալու համար չատ փոքրաք ցոյց կու տայ, բայց մի միայն փոքրաք... Գովելի է Ձեր խանդավառ գործունէութիւնը։ Հոգարկութիւն Ձեր աշակցութիւն։ Գրութիւնդիր նկատուելու առնուած է։

Ն. ՊՈԼԻՍ։ — Գ. Ա. ԱԼՊՈՅԱՆ։ — Այդ խնդրանիդ չենք կրնար յղել։ ուրիշ գիրք մը որոյեցէք, և Աստուած կը յաջոգցնենք յիշեալ նպատակին։ Կը յղենք գրքերն։

ԿԱԼԿԱՏԱ։ — Մեր։ Մ։ ԱՒԵՏԱՆ։ — Պարտք կը համարինք շնորհակալութիւն յայտնելու Ձեր համակրական նամակներուն և կը պատասխանենք։ 1. — Գանձեցինք 35 ֆրանք։ 2. — Լուսաշոգին Հ. Սուքիաս Վ. Աղամալեան Շնորհ (Նախիջեւանու և Ջահուկի կողմեր) աւանէն էր։ որդի Աղեքսանդր Աղամալեանի։ իշխան Հայոց զորաւոր Յովհաննէս Շահկերոցւոյ։ Եղբօրը հովանաւորութեամբ անցեր է Փոքր Ասիա, յետոյ Ֆիլիպէ և ապա Հաստատուեր է Մանաւոց երկիրը Վարարին բերդաքաղքին մէջ։ Հոն եղբօրը խնդրանքով մեր վանաստան առաքնորդը ղրկեր 1755ին Վենետիկ Ս. Ղազար յղած է, քահանայանալով, ուխտիս ամենէն գործունեայ անդամներէն մին կ'ըլլայ։ 1769ին կ'երթայ Պարս և Մարտաս 1784ի ատենները կը գտնուի ի Կալկաթայ և Գ. Եդուարդ Թափայէլ Ղարամեանի ամենէն մտերիմ բարեկամն կ'ըլլայ։ 50 տարեկան կը վախճանի Հնդկաստանի մէջ 1786ին։ 3. — Հոս Վենետկոյ մէջ այլ եւս ազնուական Շահրիմանեան տեսակը չի գտնուիր։ տասնեակ տարի առաջ նոյն ցեղի պայազատներէն մին վախճաներ է։ յիշատակութեան արժանի գործ մը ունեցած չէ։ 4. — «Հայկական Մատենագիտութիւն» այժմ կը պատրաստուի Հ. Արսէն Ղազիկեան մանրագին աշխատութեամբ։ մի տարիէն առաջ տպագրութեան կը սրսի։ 5. — Ցիչեալ գրամանաէն մեր տպարանի տեսչութիւնը տակաւին ոչինչ տատացած չէ։ 6. — Ընդունեցանք բանաբերան յոդուածներ՝ կը հրատարակուի։ Եւ գիտանալով որ «Բազմավէպ»ի բաժանորդաց մեծ մասն անտեղեակ է գրաբառ, կը խնդրենք ուրիշ անգամ Ձեր յոդուածներն աշխարհաբար գրել։

ԹԻՐՈՒԱՆՑ։ — Գ. Ե. ԳԵՈՐԳԵԱՆ։ — Լաւ Ձեր խնդրանց յղեցինք անցեալ տարուան եր։ րեք պրակներն, որոնց գումարն է 3.60. կանխաւ Ձեզմէ ընդունած ենք 1.50։

ԶԱՅԶԱՏ։ — Գ. Ե. ՂԱՆԱՐԵԱՆ։ — Բաժանեցինք տուսաւին մեզ չէ հասած։ «Գեղուհի»ն յղեցինք։

ՏԳՂԻՍ։ — Գ. Գ. ԲԱԼԱՍ։ — Ներկայ խմբագրութիւնս այդ գործին հետ բնաւ մասն չունենալով, բան Ձեր օրինաւոր պահանջին խնդրեալն կը վերադարձնէ ազնուութեանդ։

ԺՐՆԻՎ։ — Հ. Ռ. ՄՈՒՐՈՒ։ — Պատկառելի է Ձեր ժիր գործունէութիւնը։ մեզմէ անկախ պատճառներով Ձեր վերջին յայտարարութիւնը չենք կրնար հրատարակել։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ*

78. Կ. Գալոյ մեր Թղթակիցն կը գրէ։ — «28 մայիս (Հ. ա.) թուակիր ազգային թերթերը։ մանաւանդ «Արեւելք»ը։ «Հէրիմէ» և «Սուբհանդակ»։ իրենց ազգային բաժնին մէջ հրատարակեցին Արթաքի Ուենեանի համար յոյժ պատուաբեր հետեւեալ տողերը՝ «Ֆրանսայի կառավարութեան կրթական նախարարութիւնը՝ գնահատելով Հանրային Պարտուց վարչութեան ֆրանսերէնի թարգմանիչ և քարտուղար Արթաքի Էֆէնտի Ուենեանի մէկ բառարանական ձեռագիր աշխատութիւնը։ պատուած է զինքը Հանրհրով իբեն Officier d'Académie-ի տասիճանն ու պատուանշանը»։ Ազգային թերթերէն զատ տեղւոյն ֆրանսական և յունական թերթերն ալ փութացած էին ընել այս տոմիս պէտք եղած յիշատակութիւնը։ Moniteur Orientale յեսուագայ տողերն գրեց։ «Nous apprenons avec plaisir qu' Artaki Effendi Oundjian, de la Dette Publique Ottomane, vient d'être nommé par le Gouvernement français Officier d'Académie, en appréciation d'un important ouvrage de lexicologie qu'il prépare. Artaki Effendi Oundjian e'est toujours distingué à l'Administration de la Dette Pubblique par son talent de traducteur»։ Արթաքի (Ցարութիւն) Ուենեան։ դատարակութիւնը առած է Վենետկոյ Մուրատ-Փափայէլեան բարձրագոյն վարժարանին մէջ, և անդ։ օրինակելի բարի վարքովն ու անխոնջ աշխատասիրութեամբը։ գրաւելով իւր բոլոր մեծերուն և աւագերիներուն համարումը և մեզուի պէտ օգտուելով ամեն ուսմունքէ՝ ստացած է համայնագիտական կրթութիւն մը։ Դպրոցէն վերջ։ կենաքի պայքարին մէջն ալ դարձեալ մի և նոյն վարքով։ աշխատասիրեամբ և Մխիթարեան պատ։ հայրերէն ընդունած բարոյական առողջ սկզբունքներով հասած է արդի դիրքին։ ուրիշ գնահատուած է ամենէն աւելի իւր ֆրանսերէնի չատ յաջող թարգմանութիւնքը և գրելու և թարգմանելու մեքենական արագութիւնը համար։ և արժանացած ալ է թագաւորի ասիճանին և մեդիտիկ և օսմանիկ պատուանշանները։ Ի մի բառ, Արթաքի Ուենեանը Մխիթարեան պարարտ հոգին վրայ զարգացած տուեալ մըն է և անձնաւորեալ օրինակ

---

* Շար. տես Յուլիս 1901։

digitised by A.R.A.R.@

ինքնօգնութեան։ — Թմբագրական աշխարհին համար ալ անօգուտ և ունայնօր եղած չէ։ Վասն զի 1890էն մինչեւ 1895 աշխատակցած է Հոդելոյա S. S. Աղաբեան Կաթողիկոսին հիմնած «Պատկեր» անուն կիսամսեայ հանդէսին։ Եւ իւր յօդուածները, որոնք կը տեսնուէին Հայր Գաւիթ Նազարէթեանի, Կարապետ Գարագաշեանի, Թովմաս Թերզեանի և այլն ծանօթ, և հեղինակաւոր գրիչներու արտադրութեանցը քով, շատ կը գնահատուէին, մասնաւորապէս ուրբաց եալ նախորդ կաթողիկոս Պատրիարքէն։ — Գաղղեայ Agen քաղքին մէջ բացուած 48դ բանասիրական մրցման ալ մասնակցած է։ որոյ մէջ շահած է Mention très honorable մրցանակը գրուած ոսանաւորի մը համար։ Այս պարգան ալ մասն ունի գիրանայի կառավարութեան կողմանէ իրեն եղած պատիւին մէջ»։

79. Միսի Գործեր. — Սիսէն կը գրեն մեզ. «Մինչեւ ոսթը տարիէն աւելի է որ մեր Ս. Աթոռը թափուր է, վիճակները անհովիւ և հովեւար մնալիութենէ զուրկ, ընդհանուրն կարիքները, առանց ժողովուրդ սեպհական հոգ, կ'ցանան ամբարկերպով հասարակութիւն և իրենց Զմմաեան կաթողիկոսարանն ալ ի Սիս փոխադրելու ջանքեր կ'ընեն, յորում պիտի յաջողին ալ, շինութեան տեղը պատրաստած են և գրամական զրաւոր միջոցներ ունին։ Ահա պատրիարքարանէ Ս. Աթոռոյն դէմ բռնած ոմանմոյ վարմունքին արդիւնքը։ Ահա վնասութիւն Կիլիկիոյ հայերուն և քաղաքութիւն կաթոլիկներուն։ Յունաց նախկին Պատրիարքի հրաժարումէն մինչեւ յաջորդի ընտրութիւնն հազիւ քառասուն օր տեւեց; բայց ոսթ տարի է որ վախճանած է Կիլիկիոյ կաթողիկոսը և տակաւին յաջորդը ընտրուած չէ։ Ով է պատասխանատու այս կրծանաւոր յապաղման»։

ԱՐԻԻԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

80. Բրիւսէլ, յունիսի 30ին։ — Հայերի մէջ երածիշտ-վիրաւորիչներ չատ հազուագիւտ են; եղածներն էլ այնպիսի ընդունելութիւն են գտնում, որ յոսահատիչով, մինչդամայն մեռաբնում են իրենց ամբողջ եռանդը։ Մեր երիտասարդութեան մեծամասնութիւնը ընդհանրապէս ձգտում է ուսանել գործնական գիտութիւններ, և նոյն իսկ այնպիսի երիտասարդներ կան, որոնք ունենալով գրականական ընդունակութիւն, ուսանում են ինժեներութիւն։ Ի հարկէ; պատճառը յայտնի է, օրվ.հետեւ վերջինս աւելի արդիւնաւոր պաշտօն է։ Ես չեմ ասում, որ պէտք է թողնել գործնական գիտութիւններ, ոչ. այլ, որ արհեստի և վաճառականութեան հետ պէտք է առալ մղել և գրականութիւնը, գեղարուեստը ու երաժշտութիւնը։ — Այս տարի այստեղի կոնսերվատորիան աւարտեց հայազգի լուսինակիսա պ. Դաւիթի Գաւիթեանը։ Պարոնը Թիւրքիայից է (Տրապիզոնից)։ եղել է և Վենեսիկի Մխիթարեանների մօտ, պատրաստվում Վենեսիկի կոնսերվատորիան, որտեղ ստացել է առաջին մրցանակը, եկաւ Բրիւսէլ աւելի կատարելագործվելու։ Բրիւսէլի կոնսերվատորիան նշանաւոր է մանաւանդ իր լուսինակիսաց պրոֆէսորներով, ինչպէս են Thomson, Cornélis, Colynse և այլն։ Պ. Դաւիթեանը Thomsonի աշակերտն էր և երեք տարի է, որ աշխատում է վերոյիշեալ պրոֆէսորի հետ։ Քննութիւնը մեծ անդուրեամբ անցաւ։ — Պ. Դաւիթեանը իր արհեստի մէջ չատ հմուտ է և լաւ ապագայ է խոստանում նրան, մանաւանդ որ նա դեռ չատ երիտասարդ է։ Նոր տարի գալու է Կովկաս մի քանի կոնցերտներ տալու։ Ցանկանում ենք երիտասարդ լուսինակիսարին աջողութիւն և առաջադիմութիւն։

ՄԵՆԱ

81. Բերայի Հայ-Հասմէկանաց մէջ չատ կարեւորութիւն ստացած է Ս. Յակոբայ Հաղարարութեան մէկ որոշումը։ որ քիչ օրէն իրականութիւն պիտի գտնէ։ Ս. Յակոբայ Բանկալիի մեծ զարգացման հիշատ անկիւնը չքեղ աթարդեան մը պիտի կանգնուի, հիմնական փայտաշէն մէկ քանի փլիչած խանութներուն տեղ։ Շինութեանց դրամը պատրաստ է. Ճարտարապետը պիտի ըլլայ Լեւոն էֆ. Կիւրեղեան։ Նախկին աշակերտ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի, որ Հասմի մէջ մասնակցած է ճարտարապետական մրցանակներուն և շահած է առաջնութեան պատիւը։

ՌԻՒԶԱՆԴԻՈՆ

82. Քիչ չէ թիւը Հայ ընթացաւարտներու, որոնք տարէ տարի դուրս կու գան ամերիկեան գօլէճներէն։ Անոնց շարքին վրայ աւելցաւ նաեւ Պր. Եղիա Թ. Գէրլէեան՝ Բանսնէթիքըթի երիտասարդական գօլէճէն։ Բարեբաղդութիւն ունեցայ անոր ընթացաւարտութեան հանդէսին ներկայ ըլլալու, և հպարտ զգացի տեսնելով որ հայրենակից մը իր 3 տարուայ ուսանողութեան շրջանին մէջ ունեցած աշխատութեան շնորհիւ։ այսօր իր ընկերներուն մէջ ինքզ կը շահէր առաջնութեան պատիւը, և կարժանանար օտարներու հիացումին ու յարգանքին։ — Ընթացաւարտական արարողութեանց սովորութեան համաձայն Պր. Գէրլեան Անդրիներէն գեղեցիկ ատենախօսութիւն կ'ըրաւ, նիւթ ունենալով Հայ ազգը իրա անցեալով և ներկայով որ ըուան ծաքնահարութեանց արժանացաւ և ապահովաբար մեծ ազդեցութիւն ձգեց հանդիսականաց վրայ։ Փափաքելի է որ ամէն Հայ ուսանող կամ ընթացաւարտ իր հայրենիքը չմոռնայ և այդպիսի հանդիսաւոր պարագայներու մէջ ուրիշը ձեռքէ չփախցնէ ծանօթացնելու իւր ազգը օտարներուն։ որով հաւանաբար ալ արժանիքը կը բարձրանայ։

ՉՈՒՇ ՀԱՅԵՐԵՆԱՑ

83. Պատրիարքարանի վարչութիւն պաշտօնեաներէն Աչիքան էֆէնտի Արփիարեան, անցեալ շաբաթ երեկոյ Պատրիարքարանէ մեկնելու առեն տկարութիւն զգալէ պահ մը ետքը կնքեց վախճանագրեն, պաշտօնակցներէնս չրջապատեալ, որ բժիշկներ կոչելով աշխատեցան գրամանելու համար։ Աչիքան էֆէնտիի այս անձ-

digitised by A.R.A.R.@

ակնկալ մնէր՝ չատ տխուր տպաւորութիւն ըրած է իւր պաշտօնակցաց վրայ ալ։ Հանգուցեալն դեռ 45 տարեկան էր։ Դժբաղդաբար ժամանակէ մ'ի վեր յաճախ անհանգստութիւն կը զգար։ Բազում տարիներէ է վեր պաշտօն ունէր Պատրիարքարանի մէջ, և մասնաւորապէս Ուսումնական խորհրդոյ քարտուղար էր։ Ինչպէսպէս պաշտօնը գոհացուցիչ կերպով վարելու համար, և ամենուն հետ քաղցրութեամբ ու սիրով կը վարուէր։ Ցուզարկաւորութեան հանդէսը երկուշաբթի մայր եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ. ներկայ գտնուեցան բազմաթիւ եկեղեցականք՝ ամէն ատիճանէ, Ուսումնական խորհրդոյ անդամք, Պատրիարքարանի պաշտօնեայք, ուսուցիչք և այլ բազումք, ի յարգանս յիշատակի հանգուցեալին և ի յարգանս պաշտօնէից Պատրիարքարանի։ Եկեղեցւոյ մէջ՝ պատրիարքական փոխանորդ Գեր. Սրբազանն, և արտաքոյ եկեղեցւոյ՝ Ուսումնական խորհրդոյ անդամներէն Գեր. Եղիշէ Կարապետեան քարոզական խօսեցաւ։ (Հանգուցեալին համարելի եղբօր՝ պաշտօնակից Պ. Տ. Արփիարեանի հրապարակաւ մեր խորին ցաւակցութիւնը կը յայտնենք. Խ. Բազմ.)։

Վանայ մէջ կիրակնօրեայ վարժարան մը հաստատուեր, և բացման հանդէսը կատարուեր է ամսոյս 10ին։ Հայ լեզուի ու կրօնի ուսուցչութիւնէն լեզուի գաստիարակութիւն պիտի ըլլայ։ Բացման օրը 60է աւելի անձինք՝ իրենց անունները արձանագրել տուեր են աշակերտաց յատուկ տետրին մէջ։ Այս հաստատութիւնը՝ առաջնորդական տեղապահ Տ. Սահակ վարդապետի ջանիւք և տեղական կառավարութեան հաւանութեամբ եղած է։ ՓՈՒՆՋ

84. Վրքէկրն, յունիս 9։ — Գրեթէ 80 հոգիէ բաղկացած մեր գաղութը երկար ժամանակէ իվեր տխուր դրութեան մէջ կը գտնուէր։ Վերջերս երկարատեւ ու անդուլ ջանքերու շնորհիւ ընդհ. հրապ. ժողովի մը ունեցանք վերակազմելու համար երեսի վրայ մնացած դրագրանը և որքերու նպաստի խնդիրը։ Ուրախ ենք ըսելու որ ժողովարանը լեցուած էր մեր ուս նեցած երկսեռ ազգայիններով։ Ժողովը քաղցեցաւ ազգային երգով մը օրմն եաք արտասանութիւն մը ըրաւ օր. Վ. Եռնվքեան։ Ապա խօսեցան Շիրակոյենց հրաբիրուած պ. Գ. Մակարեան նիւթը՝ «Գրագրանի և գրի նշանակութիւնը» և Եռնվք Տեր-Ստեփանեան նիւթը՝ «Զարգացումը»։ — Ատենախօսութիւններէ եաք տեղի ունեցաւ ի նպաստ որքերու հանգանակութիւն մը, որմէ գոյացաւ Ցլը. 21ի չափ. պիտի չարունակուի տակաւին։ — Գրագրանն ալ վերակազմուեցաւ մասնակցեցան 18 անձեր։ Ցուսով ենք որ մինչեւ 30ի հանի թիւը։

ՀԱՅԻՆՈՒ

85. Իսալիոյ այրիացեալ մայր թագուհին Մարգարիտա այցելեց մեր վանքանան և ուխտ Գեր. Աբբահոր պատարագն ունկնդրելէն յետոյ, կէս ժամի չափ ամբողջ միաբանութեան ներկայութեան խօսեցաւ իր ազգական լուրջ ընտանեութեամբ. և ի յիշատակ ոսկեայ երկհարիւրամեայ յոբելինին նուիրեց եկեղեցւոյս աւագ խորանին համար չքնչ մեծ փարագոյր մը։

86. Վենետիկ Մուրատ-Ռափայէլեան վարժարանը հինգշաբթի (23ի7) կատարեց տարեկան պարգեւաբաշխութեան հանդէսը որ չատ հաճոյտ ու պարզ էր. աշակերտները արտասանեցին հայ. իտալ. գաղղ. անգլ. ռուս թուրք և գերման լեզուներով մի քանի գրութիւններ։ Հանդիսին ամենէն մեծ փայլ տուողն էր Ասատուրեան անուն աշակերտին դաշնակահարութիւնն։ ամենէն յաջող կատարեցին համարուեցան Թոսոնիի Արպաս Թատերգին Նախերգանքը և Պելլինիի Փուրիթանի թատերգին հաւաքածուն։

ԳՈՒԹԱՆ

հանդէս ամսեայ հոգեւորական, գիտական, տարուստական։ — «Գութան»ը կը հրատարակուի առ այժմ ամիսն անգամ մը։ Բաժանորդագրութիւնն է՝ արտասահմանի համար՝ 12 ֆր։ Տաճկաստանի՝ 10 ֆր։ Ռուսիոյ 6 ռուպլի. Ամերիկայի՝ 3 տոլար. Տաճկաստանի ուսուցիչներու եւ ուսանողներու։ (հաստատական վկայագրերով)՝ 6 ֆր։

Մուտք ունի ամէն երկիր։ Դիմել խմբագրութեան։

K. MÉDZADOURIAN
23 Rue de la Collégiale
PARIS

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՔՈՒՆ "HYPNOTISME"

Ստանալ փափաքողը դիմեն մեր սովորական հասցէին, դրկելով վճարագրամէջ ֆր. 1.. ֆոյ. 40.

Imprimerie Arménienne S. LAZARE – VENISE.

digitised by A.R.A.R.@